

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Մ Ո Ւ Լ

Նոր ստացանք Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր Գրականութեան և Գեղարուեստի» ժողովածուի երկրորդ գիրքը: Պ. Ն. Ա. զոնցի խմբագրութեամբ լոյս տեսնող այս հրատարակութեան առաջին գրքի հետ «Մշակի» ընթերցողները արդէն ծանօթ են: Ներկայ երկրորդ գրքի մասին էլ կաշխատենք խօսել մանրամասն, երբ կը ծանօթանանք նրա ամբողջ բովանդակութեան: Առ այժմ մենք բերում ենք մի փոքրիկ նկատողութիւն, որ շօշափում է կարեւորութիւն ունեցող մի գրական հարց: Տպագրելով հանդուգնալ Մ. Նալբանդանի մի անտիպ ափսոսելով, ժողովածուի խմբագրութիւնը այդ երկին նուիրած համառօտ նախաբանի մէջ, ի միջի այլոց, ասում է.

Բնաւորութեամբ խիստ կրօնաւոր՝ որին հուշէին լեզուն և գրելը, Նալբանդանց ընդունակ է աշխատել այնպիսի տղայական խաղեր, որպիսին է «Աղջկիւն», որ այնքան արտասովոր համարձակութեամբ տպեց «Լուսին» հանդէսը: «Լուսին» գեղական երկերի թուում է, թէ ինչ ուր գրվում է մանկանցուի ձեռքով, կարելի է տպել անխափել և մանկանց «Լուսին»-ը: Չէինք կարծում, որ անխափելի լինէր այդպիսի հեռու կարող է գնալ: Գրական հետաքրքրութիւնը ամենից առաջ պահելու է գրական մարտնչութիւն և անցնելու չէ վայելչութեան սահմանները: Բայց արժանապատիւ հօր՝ տէր Գրիգոր հետաքրքրութիւնը արշաւատող հասել է մինչև հայոց Կովկասը... Ի վնաս Նալբանդանցի դարձրելով լեզուական և հայ գրի անարատութեան...

Մենք էլ կարգադրեցինք «Աղջկիւն» մի քանի կտորները (մէկը տպված է «Լուսին» վերջին համարում) և միանգամայն համաձայն ենք պ. Աղոնցի այդ նկատողութեան հետ: Նալբանդանցի գրական հոգակի վրա «Աղջկիւն» ոչինչ աւելցնել չէ կարող, բայց մի ամբիժ, զարգափարական մարդու յիշատակը կարող է շատ բան կորցնել այդ «տղայական խաղերից»: Եւ մեղաւորը, ի հարկէ, հանգու-

Այս պալատին մէջի ցոյց դրված են աշխարհիս երկրագործական (արտերու, մարդերու և պարտէզներու) ամեն տեսակ բերքեր. հոն ցոյց դրված են նաև երկրագործական հանդերձանքներ և մեքենաներ, որոնք ցուցահանդէսին մէջ կարևոր տեղ մը բռնած են. հոն կը տեսնաք տարբեր երկրներու հողագործական տարբեր գործիքներ: Երկրագործական տարբալուծութիւնը և մեր առաջ բերած արդիւնքը ցոյց դրված են նմանապէս, նաև ոչ ուսուելի արտադրութիւններ, ինչպէս բամբակ, կանեփ, վուշ և այլն, և զանոնք խնամելու կերպերը և եղանակները, հացագործութեան, կաթնագործութեան, մեղրագործութեան արհեստներ, զանազան տեսակ արտադրութիւններ: Ծխախոտի մշակութեան ճիւղը մեծ տեղ մը բռնած է: Օգտակար միջանոսներու և ընտանի կենդանիներու համաձարակները և անոնց առկը առնելու միջոցները ցոյց դրված են նմանապէս:

Պարտիզպանական պալատի երկարութիւնն է 800 ոտը, լայնութիւնը 400, ծախված է 450,000: Այս շէնքը կը պարունակէ իր մէջ հոտաւէտ և ուրիշ զարդական և օգտակար բոյսերու ահագին պահպանարան մը, որոյ մէջ կը գտնվին նաև ամենաբարձր տեսակները պարտէզի վերաբերեալ բոյսերու, պտուղներու, ծաղիկներու և ջերմանոցի բոյսերու, մշակութեան կերպերու, պարտիզպանութեան գործիքներու կատարեալ հաւաքածոյ մը: Շէնքի ահագին մի մասը յատկացված է բազմատեսակ պտուղներու, որ ոչ մի աշխարհահանդէսի մէջ նման տեսնված չէ թէ մեծութեամբ և թէ սլուտներու զանազանութեան տեսակներ. հոն կը տեսնանք ամեն զօտիներու և կիմաններու պատկանող զարմանալի պտուղներու տեսակներ:

Ս. Երկայնեան

Ս. Լուկ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԹԻՒՆ

Պատերազմող կողմերի դիրքերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նալբանդան գործը Չեքիէն կղզում. Նամակ Օղէսայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Գաղաթական աշխարհի կարևոր դէպքերը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՄԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պոստ մը Ս. Լուկ աշխարհաանդէսին մէջ:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՔԵՐԸ

VI

Շարունակում ենք առաջ բերել խորհրդածութիւններ որոշելու համար պատերազմող կողմերի բռնած դիրքերը Մանուկ ըրայում և Կլանտունեան թերակղզում:ՆԵՐՔԻՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՏՈՑ ՄԸ Ս. ԼՈՒԻՍ ԱՇԽԱՐԱԶԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ (Նամակ Ամէրիկայից)

Տարագործական պալատի ճարտարապետական ոճը ամբողջ կորնթական է, երկարութիւնն է 1000 ոտը, լայնութիւնը 525, ծախված է 719,000 դոլար:

Այս պալատին մէջ ի ցոյց դրված են տարագործական 34 մեծ ճիւղեր, ոսկեղէն և արծաթեղէն, պղնձեղէն և երկաթեղէն կարասիներ, զանաւորներ, գորգեր, պատի համար բանուած թուղթեր, ժամացույցներ, կաշիի վերաբերեալ գործեր, տղայական խաղալիքներ, մանր գործիքներ, բրուտեղէն անոթներ, ապակեղէն և բիւրեղեղէն անոթներ, չուաններու զանազան տեսակներ, բանուածքներ, մետաղեղէններ, մուշտակներ, հագուստեղէններ, հովանքներ և այլն:

Այս առարկաներէն զատ ցոյց դրված են նաև մեքենաներու միջոցաւ անոնց շինութեան կերպերը. վերջին աստիճան հետաքրքրաշարժ և զարգացուցիչ է ցուցահանդէսի այս ճիւղը, ուր ամեն ինչ որոշ կերպով կը տեսնուի մեր շինութեան կերպերուն մէջ:

Չանազան ճարտարարուեստներու պալատի մեծութիւնը նոյնն է տարագործական պալատին հետ. այս պալատին համար ծախված է 620,000 դոլար:

Այս պալատին մէջ ցոյց դրված են ձեռագործ արուեստներու արտադրութիւններ, ուր ամանաւորապէս աչքի կը զարնէ հապոնական մասը, որ ամենէն ընդարձակը և ամենէն ճոխն է. կարելի չէ գտնվել անկից առանց հիացման:

Մեքենայից պալատի երկարութիւնն է 1000

պատակալարմար ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին «Рус. Сл.» թերթի կարծիքները և տեղեկութիւնները հետ վերաբերեալ պատերազմական բեմի ներկայ վիճակին: Այդ թերթի պատերազմական թղթակից Նեմիրովիչ-Դանչենկոյայտնում է, որ հապոնացիները, կենտրոնանալով արեւելքում, միևնոյն ժամանակ ամբողջում են Ֆինլանդիայէնում: Հարաւում գործերը գնում են Բիցգիլօից դէպի Փուկսթու, որ ըստ երևոյթին ընտրված է իբրև յենակէտ Կլանտունում: Դա մի լաւ նաւահանգիստ է: Նրա մօտ գտնվող մերձակայ կղզու վրա հապոնացիները պատրաստել են 800,000 պոլով միջրճների պահեստ: Դադուշանի հանդէպ ծովում նաւերի վրա ներկայումս կայ թշնամիների մի զօրաբաժին, որը պէտք

ուտը, լայնութիւնը 525. ծախված է 610,000 դոլար:

Այս պալատի մէջ ցոյց դրված են վերջին տարիներում մեքենական զանազան ճիւղերու մէջ կատարված հսկայ յառաջդիմութիւններ: Միացեալ Նահանգներու բաժինը մանաւորապէս հրաշալի է. Միացեալ Նահանգները այդ ճիւղի մէջ երբէք այնչափ յառաջացած չէր, որչափ Չիլիական աշխարհաանդէսի ի վեր: Հոն ցոյց դրված են շարժիչ գործիքներ իրենց գործիքներով, շրթով, գազով, պետրոլիոմով գործող զանազան մեքենաներ, ջրաշարժ, օդաշարժ մեքենաներ, հրդեհի մեքենաներ, գործողութիւնները և ուժերը չափով գործիքներ, մեքենայի գործիքներ, մետաղներ, փայտեր բանելու գործիքներ և նաւային գործիքներու զանազան տեսակներ:

Այս պալատի մէջ կը տեսնանք նաև շատ մը մեքենաներ գործողութեան մէջ, ուր յայտնի կերպով կը տեսնանք թէ ուժերը ինչ կերպով յառաջ կուգան շոգիներէն. մեքենայի կազմակերպութիւնն անտեղեակը իսկ կարող է պարզ գաղափար մը կազմել մեքենայի ամբողջութեան մասին՝ կաթնային սկսեալ հետեւելով իր երկրորդական զանազան մասերուն, (միշտ գործողութեան մէջ) շոգիի փոխանցման մանրամասնութիւններուն և կերպերուն: Գազի մեքենան և անոր հետ նմանութիւն ունեցող ուրիշ մեքենաներ, օրինակ, պետրոլիոմով, գազի բնածխական թթուով, ալքոլով և ճնշեալ օդով բանող մեքենաները միշտ ցոյց դրված են իրենց զանազան կերպ գործողութիւններում մէջ:

Երկրորդականութեան պալատի երկարութիւնն է 725, լայնութիւնը 525 ոտը, արժողութիւնը 420,000 դոլար: Երկրորդական պալատին մէջ ցոյց դրված են. երկրորդական լոյս տուող գործիքներ, երկրորդական հեռագիրներ, հեռակայանի գրութիւններ ու գործիքներ, անթիլ հեռագրի մէթոդը, անծանօթ ճառագայթի գործիքը (rayon), երկաթուղիի, կառքերու, հանագերու և հասարակաց գործերու կիրարկված

է շարժիչ դէպի Սիւլեան: Լաօդունի ուսական սահմանադրւած գործը մի բանի անգամ ընդհարումներ է ունեցել հապոնական հեծելազօրքի հետ: Ինկուի մէջ հանդարտութիւն է: Չօք իջեցնելու լուրերը ուղիղ չեն: Այնտեղ գալիս են օտարերկրեայ առևտրական նաւեր:

Ինչ վերաբերում է Պորտ-Արտուրի շրջանին, այնտեղից սպասվում են նորագոյն տեղեկութիւններ: Յիլնչօուի դիրքը կատարեց իր դերը. նա ապացոյց տուեց այն բանի, թէ ինչ անապահ ոյժ է պահանջվելու թշնամու կողմից որպէս վեր Պորտ-Արտուրը գրավի յարձակումները անելով: Ցարձակումներին դիմադրելու համար ուսաց գործը կունենայ պաշտպանութեան բոլոր միջոցները: Չօքի թիկունքը պահովված կը լինի: Ամրութիւնները, ընդհանուր կարծիքով, հոյակապ են: Ուստի հիմք կայ ենթադրելու, որ յարձակումները պէտք է յետ տրվեն: Եւ պահանջները լաւ նաւեր կորցրին. բայց չը նայելով այդ բոլորին հապոնական նաւատորմը աւելի ուժեղ է, քան ուսաց նաւատորմը: Եւ որովհետև հապոնացիները պէտք է աշխատեն հաւասարակշռել իրանց կորուստները և ոչնչացնել Պորտ-Արտուրի նաւատորմը, ուստի պէտք է ենթադրել, որ նրանք նորից մի բան կը ձեռնարկեն նաւահանգիստը փակելու դիցուք ակամներով: Կլանտունի թերակղզու հապոնական գործերի հրամանատարութիւնը յանձնարած է գնել երալ Նօդուլին, որ ունի իր տրամադրութեան տակ երկու զօրաբաժին: Ռուսները մեծ տոկոսութեամբ և յամառութեամբ դիմադրում են հապոնացիների առաջխաղացութեան:

Երկրորդական զանազան գրութիւններ ու կազմակերպ, երկրորդական տարութիւնն արտադրող գործիքներ և այլն: Եւ այն:

Ինչպէս ամեն բաժին, երկրորդական այս բաժինն ալ վերջին աստիճան ուշագրաւ է, մանաւանդ անով հետաքրքրվողներու համար: Մի առանձին բաժինի մէջ գետեղված են երկրորդական նախատարրական գործիքները, սկզբնալ իր ծագումէն. նաև ընդհանուր երկրորդականութիւնը կը տեսնանք հոն առանց կիրարկութեան, յետոյ աստիճանաբար կը տեսնանք անոր՝ զանազան օգտակարութեան ծառայեցումը. հոն կը տեսնանք նաև թէ ոչ մի նոր գիւտ յանկարծական կերպով եղած չէ, այլ ան միշտ կերպ մը շարունակութիւնը եղած է իրմէ առաջ եղած յառաջդիմութիւններու:

Փոխադրութեան պալատի երկարութիւնը 1,300 ոտը, լայնութիւնը 525, ծախս եղած է 750,000 դոլար: Այս շէնքը շինված է գաղղկական վերածնութեան ոճի համաձայն. մըրցութեան կողմանէ ցուցահանդէսի շէնքերուն երկրորդն է:

Փոխադրութեան պալատի մէջ ցուցված են ամեն տեսակ շոգեկառք, երկաթուղի կառքեր և հանդերձանքներ, ինքնավար կառքեր, ձիաքաղ կառքեր, հեծելանքներ և ասոնց վերաբերեալ առարկաներ, նաւակներ, առագաստաւոր նաւեր, շոգեմեքենա օրինակներ, երկաթուղիներու, կայարաններու, կամուրջներու գեանուլիներու ծրագիրներ և օրինակներ: Այս բաժնին մէջ ցոյց դրված են նաև օդային ճանապարհորդութեան մասին վերջին տարիներս կատարված գիւտեր ու նորութիւններ:

Այս առիթով ցուցահանդէսի վարչութիւնը 200,000 դոլարի մրցանակ մը յատկացուցած է օդաշարժ, որը պիտի տրուի ամենէն յաջող ուղղիլ օդապարիկին:

Երկրագործական պալատի երկարութիւնն է 1,600 ոտը, լայնութիւնը 500. այս պալատը ցուցահանդէսի ամենէն մեծ շէնքն է, որոյ համար ծախված է 800,000 դոլար:

ցեղալ հրապարակախօս-բանաստեղծը չէ, այլ այն մարդիկ, որոնք չեն հասկացել թէ այդպիսի գրութիւններ հրատարակելը թէ դրական էթիկայի դէմ է, թէ վերաբերում է ընթերցողներին բարոյական զգացմունքը: Դեռ Դրբան տարրական բաներ պիտի սովորեն «խմբագիր» անունով զարգարված մարդիկ...

ՆԱԽԹԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՁԵԼՖԵՆ ԿԴՁՈՒՄ (Նամակ Աստղաբեկ)

Անդրկասպեան երկիրն էլ զուրկ չէ հանրային հոգիներից: Այն ժամանակ, երբ Բագուի նաւթը գրաւում էր ամեն կողմից հարստանալու նպատակ ունեցող մարդկանց, Անդրկասպեան երկրում, մի յետ ընկած կղզում, նաւթի նշաններ էին երևում: Այդ նշանները գտել էին տեղական թուրքմէնները, որոնք սկսել էին փոքր չափով նաւթ բաշել փոխելից: Այդ ձևը բաւական երկար կը տևէր, եթէ չը հետաքրքրվէր ոմն Պալաշկովսկի, որը մի քանի վիշկաներ գրեց, բայց, ինչպէս երևաց, նա աջողութիւն չունեցաւ, որովհետեւ նախ բոլորովին անձնաթէ էր գործին և երկրորդ շատ չնչին գումար էր բաց թողել և այդպիսով շատերը, որոնք մտադիր էին իրանք էլ նաւթային շործ սկսել այնտեղ, այդ անաջողութեան իսկական պատճառը չիմանալով, թողին իրանց մտադրութիւնը:

Երկար ժամանակ Ձեկերէնը մոռացված մընաց, մինչև որ Բագուի ֆերմաներից մէկը ուղարկեց 22 տարի սրանից առաջ մի մասնագետ՝ հետազոտելու Ձեկերէն կղզին: Դա եղբ. Նորէլ ընկերութիւնն էր: Մասնագէտը գտնում է, որ այնտեղ նաւթ կայ, այն էլ մեծ քանակութեամբ: Իսկոյն 20 տարի ժամանակով կապալով վերցնում է վերոյիշեալ ընկերութիւնը և սկսում է փորել չափով գործ սկսել, բայց այն ժամանակները Բագուի նաւթի գինը բարձրանալով, անսպասելի չափերի է հասնում, այնպէս որ ընկերութիւնը այն ծախսը, որ պէտք է անէր Ձեկերէն կղզում, բարձր համարեց Բագուում անել: Բայց նախանցեալ տարիներից եղբ. Նորէլ ընկերութիւնը կրկին աւելի մեծ եռանդով սկսում է գործը, կապալով նորից վերցնում է 24 տարվայ ժամանակով, որովհետև հինը լրացած է լինում: Այդպիսով նա սկսում է գործել աւելի լուրջ կերպով, և երբ բուրավոյններից մէկը հանում է 152 սաճիկ խորութեան, նաւթի շերտեր են երևում. սկսում են քաշել և հետեանքը այն է լինում, որ սկսում է նաւթի մակերևոյթը բարձրանալ և ֆոնտան խփել մինչև 30 սաճիկ բարձրութեամբ:

Ձեկերէն կղզին այդ ֆոնտանից յետոյ արդէն գին է ստանում, դրանից տեղական շատ վաճառականներ սկսում են հողաբաժիններ վերցնել: Այստեղից երևում է, որ նաւթի հարուստ շերտեր կան, միայն ինչպէս տեսնում ենք, աւելի խորը, քան սպասում էր Պալաշկովսկին: Դրանից յետոյ ընկերութիւնը աւելի լայն ընթացք է տալիս գործին և արդէն կառուցանում է արհեստանոց—պարաֆին և վազելինա պարագասներու: Նաւթը նմանեցնում են Բագուի նաւթին, արտահանելու համար էլ յարմարեցնում կայ. «Կապիլազ-Մերկուրի» ընկ. արդէն որոշել է նաւահանգիստ շինել, յարաբերութիւն ունենալու Պարսկաստանի, Կրանսօքիայի և այլ տեղերի հետ: Օղը և ջուրը բաւական առողջաբար են: Երկի շուտով կը սկսեն միւս հողերից նաւթ քաշել, այն ժամանակ Ձեկերէն կղզին շատերի ուշադրութիւնը կը գրաւէ, բայց ցանկալի կը լինէր, որ գործին ձեռնարկողները աւելի հմուտ լինէին գործին և ապահովված ֆերմաներ, որպէս զի չը կրնային Պալաշկովսկու, Պետերբուրգի և Մոսկովայի վաճառականների 1899 և 1901 թիւ պատմութիւնը: Վերջինները վերցրել էին 29 հողաբաժին 1087 դեսետային տարածութեամբ. ամեն տեղ վիշկաներ էին դրել և ընդամենը 300,000 ռուբլի ծախել ըլոր պէտքերի համար. գործին ծանօթը կը հասկանայ, որ դա չնչին գումար է այդ անազին գործի համար. խողովակները սկսել են նեղ տրամագծով, որոնք ի հարկէ, չէին հասնել նաւթի շերտին: Նաւթ արդիւնաբերելու համար Ձեկերէն կղզում, հարկաւոր են փորձված և ապահովված ֆերմաներ:

Ա. Աստղաբեկ

ՆԱՄԱԿ ՕՐԻՍՏԱՅԻՑ

Մայիսի 13-ին

Կրկին անգամ բաղդ ունենալով այցելել Օդեսան և այս անգամ մի փոքր երկար մնալով այժմ հնարաւորութիւն ունեւմ գտնել որոշ չա-

փով ուսումնասիրելու տեղական հայ համայնքի կեանքը:

Երկար տարիների ընթացքում, գլխաւորապէս Բեսարաբիայի կողմերից, այստեղ են խմբված մոտաւորապէս 170—180 տուն հայեր: Կան Օդեսայում նաև բաւական թուով թուրքահայեր, որոնց գաղթականական հոսանքը՝ դէպի ծովի այս ափերը՝ Փոքր-Ասիայի արեւմտեան զէպերի միջոցներով մնն է սկսվել:

Օդեսայի տեղական հայերի մեծամասնութիւնը պարագայի է բացառապէս վաճառականութեամբ. մի պարագայում, որ տեղիկների նոյն իսկ ամենահեռաւոր վայրերումն էլ—ուր որ լինենք մենք—հայերիս անանջատ սեփականութիւնն է կազմում: Եւ դարմանալին այն է, որ մենք մեր հայրենիքում կամ ծննդավայրում երբէք նոյն եռանդով, նոյն յամառութեամբ չենք կաշնում առեւտրական որ և է նախաձեռնութեան, ինչպէս այդ անում ենք օտար, մեր ծննդավայրից հազարաւոր վերստեղ հեռու, գաղթավայրում. իրականութիւնն ու փաստը իրանք են ապացուցանում, որ մեր ամենայնոյն չարչին էլ, շնորհիւ իր յամառ ուղեւորութեան, մի քանի տարիների ընթացքում կարողանում է օրինաւոր կերպով համակերպվել օտար երկրի հանգամանքներին և իր գործը որոշ հիմունքների վրա դնել:

Հայերը գաղի կերպով առաջագիմել են այդ ապագաբեկում և կարողացել են որոշ դերը ստեղծել իրանց համար Օդեսայի նման մի հրաշքայական քաղաքի ընդարձակ շուկայում: Եւ ամբողջ օրերով գաղված լինելով փողային հաշիւների լարերին թում՝ վերջինից դուրս և ոչ մի բանի մասին չեն մտածում: Ձը կայ հասարակական կեանքը. և հայերը Օդեսայում անշարժ և անտարբեր են իրանց արդէն ձախճ դարձած միջավայրում: Բարբերմի միանգամայն տարբեր լինելով հայկականից, հայութեան և ոչ մի նշոյլ չէ կարելի նկատել դրանց թէ արտաքին և թէ ներքին կեանքում. «մայրենի» լեզուն համարվում է Բեսարաբիայի թիւրքերէնը:

—Ն՛կ ետախաբւրեմ, նեքէյէ գիդէյսըն:

—«Քիլիսէյէ գիտեհեղըմ, ճանըմ:

—«Ինչպիսի պատարագ օյմայաճաղ:

—Ն՛կ ուշիւն, ճանըմ:

—«Տէրտէրըմը դաշայա գիտմիշ»...

Անա մոտաւորապէս այստեղի հայերի «մայրենի» համարված լեզուն...

Այստեղ պատկերանում է աշքիս Լեհաստանի գեղադր հայերի անցիւղը, և այդ շըրջանի պատմութեան անողոք ճշմարտութիւնը, իր սարսափելի անցիւղով մի տեսակ սարսուռ է բերում վրաս. մորմոքէյ անցեալ:

Սուրխաթեան

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգից մօտ օրերս Ս. Լուի է ուղարկված 800 պատկերների և ուրիշ գեղարուեստական գործեր: Դրանցով ցուցահանդէսում կազմվելու է ուսումնական մի գեղարուեստական բաժին լոկ մասնաւոր ձեռնարկութիւնով, առանց պետական մասնակցութեան: Այդ գործում մասնակցում են 300 նկարիչներ և քանդակագործներ, ինչպէս օրինակ՝ Վ. Ն. Մալովսկի, Սուխորովսկի, Դարովսկի, Վալով և այլն: Բոլոր ուղարկված իրերը գնահատված են 350,000 ռուբլից աւելի և ապահովագրված են մի գերմանական ընկերութեան մօտ:

Նաւթարդիւնաբերողների ժողովի գաղտնիքներ խորհրդի անդամներից մէկը ժողովին ներկայացնելու է մի ծրագիր, որով առաջարկում է Բիբի-Էյրաթի գաղտնիքի կից հիմնել արհեստագիտական կուրսեր: Այդ հիմնվելը կուրսերում ընդունվելու են Բիբի-Էյրաթի և նրա նման գաղտնիքներում աւարտող սաները:

„Одесск. Нов.“ լրագիրն ասում էր, որ Հեռուր Արեւելի պատերազմի առաջադրած պետական գանձարանի լարված վիճակի պատճառով յետաձգված են աւելի յարմար ժամանակի Ռուսաստանի հարաւում և արեւելքում երկու գիւղատնտեսական ինստիտուտների և Կովկասեան պոլիտեխնիկումի հարցերը: Քննվում է միայն Նէժինում եղած լեզուաբանական ինստիտուտը փակելու և նրա փոխարէն գիւղատնտեսական ինստիտուտ բաց անելու խնդիրը, որովհետեւ այդ բանը չէ պահանջում նոր ծախքեր:

Անցած ուսումնական տարում Թիֆլիսի շիւնների գաղտնիքում աւարտող աշակերտներ չը կային, որովհետեւ աւարտական վիցերորդ դասարանում միայն մէկ աշակերտ կար, այն էլ

տարվալ կէսին թողեց ուսումը չբաւարութեան պատճառով: Հինգերորդում կային 2 աշակերտներ, որոնցից ՎԻ անցաւ միայն մէկը: Բացի դրանից, տարվալ ընթացքում առանց այն էլ չնչին թիւ աշակերտներից մի քանիսը թողին գաղտնի աղբատութեան պատճառով: Դրա հակառակ՝ սինդիկատի գաղտնիք մի քիչ աւելի լաւ վիճակի է. այս տարի դուրս է տուել 5 աւարտողներ: Այդ համաձայնարար միջ թիւ աշակերտներ ունենալու պատճառն այն է, որ Անդրկովկասեան մոնֆաթիի նախաձեռնութիւնով գաղտնիքի կից բացված է աղբատ աշակերտների համար ձրի պահանջ:

Կայսերական Հնագիտական Յանձնաժողովի յանձնարարութիւնով առաջիկայ ամսուր պէտք է կատարվեն Կովկասում հնագիտական պեղումներ Մայկոպ քաղաքի շրջակայքում, Բեսարաբիայի ափերով: Պեղումները կատարվելու են Կայսերական հնագիտական յանձնաժողովի անդամ պրօֆեսոր Ն. Ի. Վեսելովսկու վերահսկողութեան տակ:

Ներկայ 1904 թւին հասարակական ինստակալութեան համար նշանակված է 48,198 ռուբլի, որ բաշխված է հետեւեալ ձևով. ընկեցիկներին պահելու համար—16,000 ռ., կովկասեան քաղաքներում ընկերութեան նպաստը—7,200 ռ., կոյրերի ինստակալութեան Կովկասեան ձիւղին նպաստ—4,800 ռ., Բարեգործական հաստատութիւններից ինստակալութեան գաղտնիքներին նպաստ—7,000 ռ. և 1877—78-ի պատերազմում մեռած կամ կորած զինուորների և կամաւորների ընտանիքներին օժանդակութիւն 682 ռ.:

Երևանի ձիաբարձի և ջրանցքի շինութեան մենաշնորհը խորհրդ պ. Բաբեանի ստացել է ներքին գործերի մինիստրութիւնից հաստատված Երևանեան ձիաբարձի և ջրանցքի շինութեան ծրագրերի մի քանի փոփոխութիւններով: Այդ պատճառով Երևանում արդէն կազմվել է տեղական դրամատէրերից մի ընկերութիւն, որին պ. Արշակ Բաբեանը տալիս է իր իրաւունքները:

Յիշեցնում ենք, որ այսօր, կիրակի, մայիսի 23-ին, Թիֆլիսի արտադրական թատրոնում տեղի կունենայ երգիչ Գ. Բոյանձեանի կօնցերտը: Մենք տուել ենք մեր ընթերցողներին տեղեկութիւններ երգչի և նրա կօնցերտի ծրագրի մասին: Կօնցերտը պէտք է տեղի ունենար մայիսի սկզբին, բայց յետաձգվեց մինչև այսօր:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Գաւառիս ընկալութիւնը ստիպված է մինչև մայիսի վերջերը կերակրել անասուններին խոտով ու դարմանով, որովհետև մայիսի 6 և 16-ին եկած ձիւները ստիպեցին մեր հողագործներին դադարեցնել առանց այն էլ թիւրի մնացած դաշտային աշխատանքներն ու անասուններին գոմ բշել: Երբ մարդիկ այս տարի աշխարհի վերջն են համարում, որովհետև չը տեսնված ու չը լաված բան է Նոր-Բայաջետում մայիսի մէջ ձիւն գալը, այն էլ այն հաստութեամբ, որ նոյն իսկ ձիւնը չէինք տեսնել: Բոլորովին անմիթիթար գրութեան մէջ, ցամաք հացի կարօտ մեր հողագործները երբէք չեն կարող մոռանալ 1904 թուի գարնան բացվելը: Մարտ ամիս մէջ, երբ նրանք պատրաստվում էին դուրս գալ երաւ աշխատելու, վրա հասան մի կողմից տաւարի ժանտախտը, իսկ միւս կողմից դիֆթերիա: Գիւղացու այս ցաւերը փոքր ինչ թեթեւացան, շնորհիւ պ. գաւառագետի, որի միջնորդութեամբ Ձիւնախի, Նեխովկա և Նորատուզ գիւղերը կորցրած անասունների համար մօտ 7000 ռ. նպաստ ստացան»:

Սուրմալուի գաւառի ԴԱՇԲՈՒՐՈՒՆ գիւղից մեզ գրում են. «Գաւառը մեղանում, թէ և արդէն սկսվել է շատ վաղ (համարեա փետրվար ամսից), բայց շարունակ տեղացող անձրևների պատճառով՝ աշխատանքը դեռ չէ սկսված: Վերջին օրերս եղանակը մի քիչ լաւացել է և մեր գիւղացիք սկսում են աշխատել գաղտնիքում և ապրիլներում: Ամեն տարի այս ժամանակ մեր բամբակի արտերը ցանված պրծած էին լինում, իսկ այսօր միշտ տեղացող անձրևների պատճառով, յոյս չունենք, որ մինչև յունիս վերջացնենք բամբակացանը: Շատ տեղեր էլ կը մնայ աշնանը ցորեն ցանել: Թէև դարձան ցրտից ֆլապիցին ծառերի պտուղները, բայց էլի յոյս կայ, որ լաւ բերք ստացվի խաղողի այգիներից»:

Ղազարի գաւառի ԹՈՎՈՒՂ գիւղից մեզ գրում են. «Անա ուղիղ մէկ շաբաթ է, որ մեր գիւղերում անձրև է տեղում, իսկ այսօր երեկոյան դէմ սկսվեց ձիւնը: Ցուրտը փչացրեց մեր աղբատ գիւղացիների թէ աշնանային և թէ գարնանային վարուցանը, այգիները, բանջարանցիները և վերջապէս տները: Օր չէ լինում, որ մի օր և է բնակարան չը բանդվի: Հէնց այսօր իմ աչքովս տեսայ մի սենեակ, որը ցեխով էր պատած, հեռու եկաւ հէնց այն ժամին, երբ տանէրը հետացաւ իր խրճիթից: Ցուս չը կայ, որ չը կաթի, մեր գիւղացիների խրճիթները բոլորը հին ձևի են: Մեր գիւղացիները անասունների արօտատեղ չունենալու պատճառով՝ իրանց անասունները քեցին «Սաղիր» անունոված սարը այն ժամանակ, երբ եղանակը լաւ էր, որտեղ անասունները գիշերը պէտք է մնան դուրսը. իսկ այժմ, որ ձիւն է գալիս, նրանք կը մըսեն ցրտից և կը կոտորվեն, իսկ գիւղացու միակ ապրուստը իր երկու կամ մէկ կոթն է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՐԱԶՄԻ ՇՈՒՐԱԿ

Յգիւն-Չժուի հակասամարտի մանրամասնութիւններ: Տօկիօց հեռագրում են, որ հրատարակված է գինեբաղ Օկուի պաշտօնական հեռագիրը հետեւեալ բովանդակութեամբ. «Մենք վերջացրինք յարձակման պատրաստութիւնները մայիսի 12-ին և կէս գիշերին դիմեցինք գործողութեան: Շարեկով 4-րդ գիւղիկան կենտրոնում և 3-րդ ձախ թիւ վրա, մենք շարժվեցինք դէպի Յգիւն-Չժու և Նանսան: Փոթորկալի եղանակ էր և կատարեալ խաւար. այնուամենայնիւ մեր զօրքերի մի մասը յարձակվեց Յգիւն-Չժուի վրա, որը շուտով գրաւվեց: Եւստիկի Յգիւն-Չժուի վրա, որ Նանսանի յարձակումը կը սկսվի առաւօտեան ժամը 4 և 40 րօպէին, բայց մի քանի պատճառներով արտիլերիան, որ գտնվում էր գինեբաղ Ուչիեմաի հրամանատարութեան ներքոյ, կրակը բացեց մի ժամ յետոյ: Առաւօտեան ժամը 6-ից մեր չորս պատերազմական նաւերը աշակցում էին ցամաքային բանակի գործողութիւններին Յգիւն-Չժուի ծոցում: Թշնամին պատասխանում էր իր բոլոր թնդանօթներով: Տեղի ունեցաւ կատաղի կռիւ. երեք ժամից յետոյ առասկան մարտկոցների կրակը սկսեց լսել, ուստի մեր հետեակը առաջ շարժվեց: Ձը նայելով, որ ռուսները նորից թնդանօթաձուլութիւն սկսեցին, հետեակը ընդունեց մի դերք՝ 500—300 մետր հեռու առաւօտեան ամրութիւններից: Առաւօտեան ժամը 11-ին թշնամու բոլոր բաց ամրութիւնները լռեցին մեր թնդանօթների կրակի տակ և նրանց արագաձիգ թնդանօթների երկու բաւարեանները նահանջեցին դէպի Նանսան-Պուսանի, որտեղից նրանք ժամանակ առ ժամանակ հարուածում էին մեր զօրքերին: Առաւօտեան ժամը 10-ին Դանիի կողմից եկաւ թշնամու մի թնդանօթաձիգ նաւ կամ շոգհատ թնդանօթներով և սկսեց հարուածել մեր երրորդ դիվիզիային: Այդ տեղից երեւցան նաև հինգ նաւակներ, լցված զօրքերով, որոնց թշնամին ենթադրում էր ափ իջնանելի Լիւ-Շուտունի ծոցում, բայց տեսնելով, որ մեր զօրքերը առաջ են խաղում, նաւակները հեռացան: Ռուսները ունէին Նանսանից դէպի հարաւ Դանսան-շինում մի բաւարեա, բաղկացած 4 թնդանօթներից, որոնք 7000 մետր հեռաւորութեան վրա հարուածում էին մինչև երեկոյան ժամը 7-ը մեր երրորդ դիվիզիային և խանդարում էին մեր արտիլերիայի թնդանօթաձուլութիւնը: Ռուսների գրաւած դերքերը Նանսանում, թիւք բլուրների վրա, պաշտպանված էին պատուարների և ժամանակակից ամեն տեսակ կառուցումներով: Նրանք ունէին 70 թնդանօթ և 8 զննաձիգ. ամրութիւնները բաղկացած էին խրամանների մի քանի շարքերից և ակնային ու ցանցային խափանիչներից: Մեր արտիլերիան գործողութեան շարքերը որպէս զի աւելեց թշնամու ամրութիւնները, շարդէ նրանց բաւարեանները և պատասպառէ մեր հետեակի յարձակումը, բայց թշնամու հետեակը ցոյց էր տալիս յամու դիմադրութիւն իր զօրեղ դերքերից, որոնց վրա գրոհ տալը գիտար էր: Մինչև երեկոյան ժամը 5-ը մեզ չաջողվեց պատուածք անել յարձակման համար: Կուռ յետագայ բոլորում երրորդ դիվիզիան այնքան մօտեցաւ ռուսներին, որ բոլորովին շրջապատված տեսաւ իրան թշնամուց: Ռուսները ուժեղացրին իրանց հետեակը մեր ձախ թիւ դէմ և երկու բաւարեանների աջակցութեամբ Նանսան-Պուսանի մօտ փորձեցին հակա-յար-

Типографія «ГЕРМЕСЬ» С. Назарянца, М.-х. пр. № 81